ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ N 1
N ՇՀՄՁԲ-7/9-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան **29.09.2014թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ա. Միրզաբեկյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և «Միտք-Կ» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Ա. Հովսեփյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև Կատարող, մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր՝ հիմք ընդունելով 08.05.2014թ. կնքված N ՇՀՄՁԲ-7/9-1 գնման Պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.2 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն փոփոխությունը (այսուհետև՝ Փոփոխություն) հետևյալի մասին.

1. Փոփոխության առարկան

1.1 Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրի գնման և վճարման ժամանակացույցերում կատարել փոփոխություն և կարի ծառայության արդյունքում «Կոստյում՝ բամբակյա, կեպիով» ապրանքատեսակի 2014թ. սեպտեմբեր ամսվա քանակներից 600 լրակազմի և հոկտեմբեր ամսվա քանակներից 1000 լրակազմի մատակարարումը տեղափոխել դեկտեմբեր ամիս, բայց ոչ ուշ, քան 20.12.2014թ: Վճարումը կիրականցվի վերը նշված համապատասխան ամիսներին՝ աճողական կարգով, բայց ոչ ուշ, քան 25.12.2014թ:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Փոփոխությունն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն Փոփոխության մեջ չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ծառայության հանձման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Փոփոխությունը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 1 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Միտք-Կ» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ք. Վանաձոր, Նժդեհի 7հ
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Յունիբանկ» ՓԲԸ Վանաձոր մ/ճ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 24101005129000
ՀՎՀՀ 00867415	ՀՎՀՀ 06903588
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-ՆՏԱ դեպարտամենտի պետ	տնօրեն
Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ	Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՇՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում, ստորև ներկայացնում է «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/13–ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-7/9» ծածկագրով ՇՀ ընթացակարգի արդյունքում 2014թ-ի մայիսի 8-ին կնքված N ՇՀԾՁԲ-7/9-1 ծածկագրով պայմանագրում (այսուհետև՝ Պայմանագիր) 2014թ-ի սեպտեմբերի 29-ին կատարված փոփոխության (այսուհետև՝ Փոփոխություն) վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Հաշվի առնելով պատվիրատուի կողմից ծառայությունը մատուցելու համար տրամադրման ենթակա անհրաժեշտ երեսացուի գործվածքի բացակայությունը՝ կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրի գնման և վճարման ժամանակացույցերում կատարել փոփոխություն:

Փոփոխության նկարագրություն: Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրի գնման և վճարման ժամանակացույցերում կատարել փոփոխություն և կարի ծառայության արդյունքում «Կոստյում՝ բամբակյա, կեպիով» ապրանքատեսակի 2014թ. սեպտեմբեր ամսվա քանակներից 600 լրակազմի և հոկտեմբեր ամսվա քանակներից 1000 լրակազմի մատակարարումը տեղափոխել դեկտեմբեր ամիս, բայց ոչ ուշ, քան 20.12.2014թ: Վճարումը կիրականցվի վերը նշված համապատասխան ամիսներին՝ առողջական կարգով, բայց ոչ ուշ, քան 25.12.2014թ:

Փոփոխության հիմնավորում: Սույն փոփոխություն կատարվում է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 7.2 կետը: Սույն փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 10.02.2011թ. № 168-Ն որոշման 71-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին: Պայմանագրում նման փոփոխություն կատարվում է առաջին անգամ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ՏՎ և ԳՓՁ վարչության գլխավոր մասնագետ Ռ. Մարդոյանին:

Հեռախոս՝ <u>010-29-44-99:</u>

Էլ. փոստ՝ r.mardoyan@mil.am:

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն: